

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Թ. ՄԱՆԴԵԼՅԱՆ

Ի՞ՆՉԵ

ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

338.98(47)

Մ-25

Հ Ա Յ Գ Ե Տ Հ Ր Ը Ց — 1929 — Ե Ե Ր Ե Վ Ը Ն

2802-10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԶՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Թ. ՄԱՆԳԱՅԱՆ

338.98(47) 111

Ը 25
ւր

**ԻՆՉ Ե ՀՆԳԱՄՅԱ
ՊԼԱՆԸ**



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1929

24 .06. 2013

32.229



25962-60

ԻՆՉ Ե ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ

ԻՆՉՈՒՒ ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԼԱՆԱՅԻՆ Ե ԿՈՉՎՈՒՄ

Մեր, Խորհրդային Միության տնտեսությունը պլանային է, նա ղեկավարվում է վորոշ պլանով. մենք այժմ առաջուց չափում ու կշռում ենք, վորոշում, թե, որինակ, իեկող տարի ինչպես պիտի զարգացնենք մեր արդյունաբերությունը, վորտեղ, ինչ տեսակի և ինչ մեծություն հանքեր, գործարաններ ու յերկաթուղիներ պիտի շինենք, ինչքան արդյունք պիտի ստանանք, ինչ չափով պիտի իջեցնենք ինքնարժեքը, բարձրացնենք աշխատավարձը, քանի չոր կոլխոզ պիտի կազմակերպենք, ինչքան պիտի ավելացնենք ցանքսերի տարածությունը և մոտավորապես ինչքան բերք ստանանք և այլն և այլն: Մեր բոլոր կարիքները հաշվի առնելուց հետո մենք վորոշում ենք, թե ինչքան փող ենք ծախսելու այդ բոլոր գործերի վրա և կազմում ենք մեր ամուր պլանը—ծրագիրը: Տարեկան պլանները սովորաբար կոչվում են վերատուգիչ թվեր (որինակ՝ առում են՝ արդյունաբերության 1929—30 տնտեսական տարվա վերատուգիչ թվերը), և նրանցով ենք ղեկավարվում մենք մեր գործնական աշխատանքներում:

Պլաններ կազմելը շատ բարդ գործ է, վորովհետև ամեն-ինչ, ամեն մանրամասնություն պիտի հաշվի առնել. այդ պատճառով մենք մինչև հիմա ունեցել ենք միայն տարեկան պլաններ: Այժմ է, վոր մենք

կազմել ենք առաջին անգամ մի պլան ամբողջ հինգ տարվա համար՝ սկսած 1928—29 տնտեսական տարուց մինչև 1932—33 թ. (տնտեսական տարին սկսվում է հոկտեմբերի 1-ից):

Ինչպես ասվեց, տնտեսությունը մենք ղեկավարում ենք մեր կազմած պլանների հիման վրա: Ուրիշ վոչ մի յերկրում դուք այդպիսի բան չեք տեսնի: Կապիտալիստական կարգերում պլան գոյություն չունի և չի լի կարող գոյություն ունենալ: Այնտեղ ամեն մի կապիտալիստ կամ ամեն մի կապիտալիստական խումբակ՝ արեստ, գործում և այնպես, ինչպես իր քեֆն և ուզում, չենթարկվելով վոչվոքի: Կապիտալիստները վոչ միայն ընդհանուր պլան չեն կազմում, այլև թագ-ցընում են իրարից իրենց մտադրություններն ու ծր-րագրները, վորովհետև կատաղի մրցման մեջ են իրար հետ: Նրանք հաճախ շինում են այնպիսի ձեռնարկներ, վորոնց կարիքը յերկիրը չի դգում, արդյունաբերության միևնույն ճյուղի մեջ զանազան կապիտալիստներ շինում են իրար դեմ մրցող գործարաններ, վորոնց մի մասը միայն դիմանում է մրցմանը, մնացածը անպեաք է դառնում և դադարում աշխատելուց: Կապիտալիստական մրցման ընթացքում յուրաքանչյուր յերկրում միլիարդներ են իզուր տեղը վատնվում:

Տնտեսության պլանային ձևը հնարավորություն է տալիս մեծ խնայողություններ կատարել, հաշվով ու չափով ծախսել ամեն մի կոպեկ, փոխադրելով միջոցները հարկ յեղած դեպքում արդյունաբերության մի ճյուղից մյուսը:

ՍՈՐԻՐԳԱՆԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՑՆՑՑՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՈՒՆ ԳՈՒՆԸ

Մեր Խորհրդային Միության արդյունաբերությունը զարգանում է արագ թափով. տարեկան նոս միջին հաշվով ավելացնում է իր արտադրանքը 23-ից 25 տոկոսով, այն ժամանակ, յերբ կապիտալիստական ամենաառաջավոր յերկրներում այդ տոկոսը չի անցնում նույնիսկ ամենահաջող տարիներում 5-8 տոկոսից: Այդ արագ թափի պատճառները հետևյալներն են.

1. Այն տասնյակ ու հարյուրավոր միլիոնները, վոր բուրժուազիան ծախսում էր իր անձնական պեաքերի վրա, մեզանում ամբողջովին ծախսվում են ժողովրդական տնտեսության կարիքների վրա:
2. Մեզ մոտ չկա կապիտալիստական մրցում, և իզուր տեղը միլիարդներ չեն կորչում:
3. Մեր բանվորությունը ակտիվ ոգնում է սոցիալիստական շինարարությանը:
4. Մեր պլանային սխտեմը թույլ է տալիս Երպասակահարմար և խնայողաբար ծախսել մեր միջոցները:

Հնգամյա պլանով արտադրանքն աճելու յի ավելի ևս բարձր թափով՝ տարեկան մոտ 34 տոկոսով: Այդ բարձր թափն անհրաժեշտ է մեր հետափայտությունը հաղթահարելու, մեր յերկրի պաշտպանողական ընդունակությունն ուժեղացնելու համար: Յեվ 5 տարվա ընթացքում մենք արդեն շատ ու շատ առաջ կանցնենք, մեր յերկիրն այլևս հետափայտ գյուղատնտեսական յերկիր չի լինի, այլ կդառնա արդյունաբերական-գյուղատնտեսական յերկիր:

Ահա թե ինչ հսկայական փոփոխություններ կտա հնգամյակը.

Ելեկտրական ուժի արտադրութիւնը 5 միլիարդ կիլովատտ-ժամից կբարձրանա 22 միլիարդի տարեկան, այսինքն կավելանա 4 ու կես անգամ:

Յերկաթի արտադրութիւնը 4 միլիոն տոննից կբարձրանա մինչև 10 միլիոն:

Քարածուխի արտադրութիւնը 3,6 միլիոն տոննից կհասնի 7 ու կես մ. տոննի:

Մեքենաների արտադրութիւնը մեծ թուիչք կգործի: Առանձնապէս կավելանա գյուղատնտեսական մեքենաների արտադրանքը՝ 153 միլիոն ուսբուլց 700 միլ. ու և տրակտորների թիվը (2-3 հազարից մինչև 60 հազար տարեկան): Հնգամյակի վերջին տարում մենք կարտադրենք տարեկան մոտ 400 000 ավտոմոբիլ (այժմ արտադրում ենք մի յերկու հազար):

Ուղղակի հեքիաթալին չափերով կաճի քիմիական արդյունաբերութիւնը, մանավանդ նրա այն ճյուղերը, վորոնք արտադրում են արհեստական կերպով հողը պարարտացնելու նյութեր. անցյալ տարի արտադրել է 175 հազար տոնն, իսկ հնգամյակի վերջին տարին կտա մոտ 9 միլիոն տոնն, այսինքն 70 անգամ ավելի:

Նոր յերկաթուղագծերի յերկարութիւնը կհասնի 20.000 կիլոմետրի, այսինքն 80 անգամ ավել, քան Սորհրդային Հայաստանի տերրիտորիայով անցնող յերկաթուղագիծն է:

Գյուղում կոլխոզների և սովխոզների միջոցով կընդգրկվի 27 միլիոն հեկտար հող: Նրանք կտան շուկա դուրս յեկող (ապրանքային) հացի 43 տոկոսը: Գյուղացիների 25 տոկոսը՝ մոտ 20 միլիոն շունչ կլինեն կոլխոզների մեջ: Արդեն յերկու տարի հետո մենք

վոչ միայն բավականաչափ հաց կուեննանք ներքին կարիքների համար, այլև կկարողանանք արտահանել արտասահման: Շնորհիվ գյուղատնտեսութեան տեխնիկայի զարգացման, բեքքատվութիւնը կբարձրանա 35 տոկոսով: Ապրանքային սովը հետզհետե կթուլանա և կվերանա, վորովհետև մեր արդյունաբերութիւնը տալու յե 1932—33 թվին յերկու ու կես անգամ ավելի սպառելու ապրանք, քան անցյալ տարի:

Ընդհանուր առմամբ ժողովրդական տնտեսութեան մեջ կմտցվի 64 միլիարդ ուրբլի: Թե ինչպիսի խոշոր գումար է սա, կարելի յե յերևակայել, յեթե ասենք, վոր ամբողջ Սորհրդային Միութեան արդյունաբերութեան մի տարվա ընթացքում արտադրած ապրանքների արժեքը հիցք աճգամ պակաս է այդ գումարից:

Բարեկալվում է գյուղացիութեան ու բանվորութեան դրութիւնը: Աշխատավարձն ավելանում է 55—60 տոկոսով, չհաշված այն, վոր ապրանքների գները իջնելու յեն 10—15 տոկոսով:

Հնգամյակի ընթացքում առաջին հերթին մենք զարգացնելու յենք այսպէս կոչված ծաճ արդյունաբերութիւնը՝ արտադրութեան միջոցների արտադրութիւնը (մետաղ, քարածուխ, նավթ, քիմիական նյութեր, շինանյութեր և այլն). այստեղ աճումը կատարվում է 3,2 անգամ: Ինչ վերաբերում է քեքեվ արդյունաբերութեանը՝ սպառման իրերի արտադրութեանը (հագուստեղեն, սննդամթերքներ և այլն), այստեղ աճումը լինելու յե ավելի քիչ (2,3 անգամ):

Գտնվում են այնպիսի մարդիկ, վորոնք ստում են. ինչու է յեք ընկել մետաղի ու քարածուխի յետեվից. յեկեք առաջ արտադրենք տեքստիլ ապրանքներ:

շաքար, կաշի, թուղթ և այլն, մեղմացնենք միանգամից պարանքային սովը և հետո միայն մտածենք արտադրութեան միջոցների մասին:

Յեթե կոմմունիստական կուսակցութիւնը և խորհրդային իշխանութիւնը կանգնեցին այս տեսակետի վրա, կործանարար հեռանքներ կստացվեցին մեր ամբողջ սոցիալիստական շինարարութեան համար: Յեւ իսկապես, չէ՞ վոր թեթև արդյունաբերութիւնը զարգացնելու համար մեզ հարկավոր են մեքենաներ և ԵՖՏԵՏԵՐ. ուրեմն ստիպված պիտի լինենք արտասահմանից բերել այդ ամենը: Գյուղատնտեսութեան վերակառուցման և բերքատվութեան բարձրացման համար ևս մեզ հարկավոր են մեքենաներ և պարարտանյութեր. նույնպէս արտասահմանից պիտի բերենք, յեթե մեզ մոտ չարտադրենք: Այդպիսով մենք մեր յերկրի ապագան կենթարկենք կապիտալիստական աշխարհի կապրիզներին: Զրկելով մի կողմից, մեր յերկիրը ամուր տնտեսական բազայից, մենք կզրկեցինք նրան այդ ձևով նաև պաշտպանվելու միջոցներից, քանի վոր այդ միջոցներն են յերկաթը, պղինձը, քարածուխը և այլն:

Ծանր արդյունաբերութեան զարգացումը զարնթնում է մեզ միանգամայն ու ընդմիջոս անկախ կապիտալիստական աշխարհից: Ահա թե ինչու պետք է զարկ տալ ամենից առաջ այդ արդյունաբերութեանը՝ թեկուզ և ժամանակավոր զրկանքների գնով:

ԱՆԳՐԿՈՎԿԱՍՏՆԵՆ ՓԵՊԵՐՏՅԻՍԻ ՀՆԳՄՅԵՎԸ

Անգրկովկասում, վորը անցյալներում յեղել է հետամնաց ծալրամաս, ինդուստրիալիզացիան առաջ է

գնալու ավելի ուժեղ թափով, քան Սորհրդային Միութեան մշուս ավելի զարգացած կենտրոնական շրջաններում: Հնգամյակի ընթացքում լեռնային արդյունաբերութիւնն աճելու չե 6 և կես անգամ, շինանյութերինը՝ 5 անգամ, քիմիականը՝ 6 անգամ, տեքստիլ արդյունաբերութիւնը՝ 6 և կես անգամ: Հիմնական ներգրումների (արդյունաբերութեան լայնացման և նոր գործարանների շինարարութեան համար ծախսովոյ) գումարը կազմելու յե հինգ տարվա ընթացքում մեկ միլիարդ հարյուր քսան յեկ հինգ միլիոն ուրբի, վորից 852 միլիոնն ստանում է Բազվի նալթարդյունաբերութիւնը: Միմիայն ելեկտրարդյունաբերութեան վրա ծախսվելու յե 122 միլիոն ուրբի: Սորոր գումարներ են ծախսվելու արդյունաբերութեան հետևյալ ճյուղերում.

Տեքստիլ արդյունաբերութեան	50	միլիոն	ուրբ.
Փայտամշակման	»	39	»
Մանրամթերքների	»	30	»
Մետաղագործական	»	29	»
Շինանյութերի	»	26	»
Քարածուխի	»	22	»

Յելնելով մեր յերկրի բնական հարստութիւններից և կլիմայական պայմաններից՝ մենք նպատակ ենք գնում թե Անգրկովկասում և թե Հայաստանում, վորը նրա անբաժան մասն է կազմում, արդյունաբերութիւնը զարգացնել վորոշ ուղղութեամբ, այն է՝

1. Հիմնել ամբողջ արդյունաբերութիւնը ելեկտրական ուժի վրա, վորը մեզ մոտ շատ եթան է:
2. Զարգացնել լեռնային արդյունաբերութիւնը (նավթ, քարածուխ, պղինձ, մարգանց, յերկաթ):

3. Եժան կներգիայի սգնությամբ զարգացնել քիմիական արդյունաբերությունը:

4. Ստեղծել շինանյութերի արտադրություն (տուֆ, պեմզա, ցեմենտ և այլն):

5. Ոգտագործել անատոային հարստությունները փայտից զանազան իրեր պատրաստելու համար:

6. Ոգտագործել տեղական գյուղատնտեսական հուս նյութերը (բամբակ)՝ տեղում վերամշակելով նրանց և միաժամանակ մատակարարել այդ նյութերը Միության մյուս շրջանների արդյունաբերությանը:

Պլուզասեեսու քյաճ վերաբերմամբ Անդրկովկասի հնգամյակը հիմնական ուշադրություն է դարձնում տեխնիկական և արժեքավոր կուլտուրաների (բամբակ, ծխախոտ, թեյ, խաղող, մրգեր) և անասնապահության, հատկապես կաթնատնտեսության զարգացման վրա:

ԽՈՐՀՐԳՆԵՐԻ ՀԱՅՏՍՆԵՐԻ ՀՆԳՆՄԱՆ ՊԼԱՆԸ

Հայաստանը անցյալում ցարական դադութ լինելով իր հարևաններից էլ ավելի հետամնաց է չեղել: Դաշնակներն իրենց տիրապետության ժամանակ բացի ավերից ու քայքայումից ուրիշ վնասինչ չեն տրվել լեռերին: Միայն խորհրդային իշխանության որով Հայաստանում ստեղծվում է սեփական արդյունաբերություն:

8 տարվա ընթացքում՝

կիսով չափ վերականգնված է պղնձի արդյունաբերությունը և ամբողջովին՝ գինու ու կոնյակինը: Նոր ստեղծված՝ Լենինականի հսկայական տերու-

տիլ կոմբինատը, պեմզայի արտադրությունը, բամբակագործ գործարաններ, կարբիդի, մեխանիկական, կաշվի, մետաքսի և մի շարք այլ գործարաններ, Յերևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանները, սկսված է Ջորագեսի հսկա կայանը, շինված են ու շինվում են մի շարք ջրանյութեր՝ Շիրակի, Եջմիածնի, Կարճևանի, փոքր Սարգարաբաղի և այլն:

Հնգամյակի ընթացքում Խորհրդային Հայաստանի տնտեսությունը հսկա քայլերով է առաջ գնալու: Յիթե մեր արտադրության տված ապրանքների ամբողջ արժեքը չեղել է 1928—29 տարում 38 միլիոն ռուբլի, ապա 1932—33 տարում նա անցնելու չե **160 միլիոնից**:

Հինգ տարվա ընթացքում 5-6 անգամ ավելի շատ է զարգանալու մեր արդյունաբերությունը, քան վերջին 8 տարվա ընթացքում միասին վերցրած:

Ելեկտրական ուժի արտադրությունը 3186 կիլովատտից բարձրանալու չե 48.506 կիլովատտի, այսինքն **16 անգամ** ավելի չե լինելու: Կառուցվելու չե Ջորագեսի հիդրոէլեկտրակայանը 20 հզար կիլովատտ կարողությամբ: Կառուցվելու չե Քանաքեռի ուժեղ կայանը, Իջևանի ու Ղափանի հիդրոէլեկտրակայանները, լայնացվելու չեն Լենինականի և Յերևանի կայանները, չհաշված այն մանր կայանները, վորոնք սպասարկելու չեն գյուղացիության կարիքները:

Եժան ելեկտրական ուժը հնարավորություն է տալիս Հայաստանում կառուցելու ուժեղ **ֆիսիկական** արդյունաբերություն: Մենք արդեն կարբիդի գործարան ունենք: Այդ գործարանը լայնացնելուց զատ, մեզ մոտ կառուցվելու չեն **ցիանամիդի** (Ղարաքիլի-

յա), պղնձաբազալի, ծծմբաքվի և փայտի քիմիական վերամշակման գործարաններ: Մեր գյուղն այդպիսով մի քանի տարի հետո կստանա մեծ քանակութեամբ հողի պարարտացման նյութեր և կկարողանա բերքատուութունը բարձրացնել: Հնգամյակի վերջում քիմիական արտադրութունը կտա 7 ու կես միլիոն ուղբուր արտադրանք:

Նույն չափին կհասնի **ԵՒՆԱՐԹՈՒԿԱՆ** նյութերի արտադրութունը՝ **ՏՈՒՖԻ**, **ԱԵՄԳԱՅԻ**, **ԳԵՄԵՆՏԻ**, **ԳՐԱՆԻՏԻ**, **ՎԱՐՄԱՐԻ**, **ԿՐԻ**, **ԳԱՆԻ**, **ՓԱՅՏԵՂԵՆԻ** և այլն: Մի շարք նոր գործարաններ են կառուցվում այդ բոլոր նյութերը արդյունահանելու համար: Առանձին նշանակութուն ունի **ԱՐՔԻԿԻ ՏՈՒՖ** քարը, վորը շատ լավ շինանյութ է և արտահանվելու չէ մեր հարևան չերկրները, նույնիսկ Ռուսաստան և արտասահման: **ՊԵՄԳԱՆ** այժմս ել մենք արտահանում ենք արտասահման: Այդ չերկուսն ել միութենական նշանակութուն ունեցող շինանյութեր են:

Պղնձի արտադրութունը ծրագրված էր ավելացնել 4 անգամ, սակայն միութենական ղեկավար տնտեսական մարմիններն անհրաժեշտ են գտել ել ավելի ուժեղացնել նրա զարգացման թափը: Այդ արդյունաբերութունն ամբողջովին վերակառուցվելու չէ տեխնիկայի վերջին խոսքի համեմատ: Ծինվելու չէ ֆլուտացիոն ֆարբիկա, նոր պղնձաձուլարաններ և այլն: Խոշոր գումարներ են ծախսվելու հետախուզական աշխատանքների և բանվորների բնակարանային շինարարութեան վրա: Պղնձի արդյունաբերութեան վերակառուցման վրա ծախսվելու չէ ավելի քան 20 միլիոն ուղբուր:

Տեֆուի արդյունաբերութունն ավելի ևս խոշոր թափով է զարգանում: Անցյալ տարի նրա արտադրանքի արժեքը յեղել է 2 միլիոն 360 հազար ուղբուր, իսկ հնգամյակի վերջին տարում արտադրվելու չէ 49 միլիոնի ապրանք: Իլիկների թիվը հասնելու չէ հարյուր հազարի, իսկ գործվածքային մեքենաների թիվը՝ յերկու հազար հինգ հարյուրի:

Թեթև արդյունաբերութեան մյուս ճյուղերից զարգանում է **ՇԱԲԱՐԻ** արտադրութունը. Լենինականում կառուցվելու չէ մեծ շաքարի գործարան: Կառուցվելու չեն նաև մի քանի կոնսերվի գործարաններ, կրաՎալի գործարան և այլն:

Աճում է խոշոր չափով և տրանսպորտը: Հայաստանում շինվում են յերկաթուղային չերեք ճյուղ՝ **ԱՊՏԱՇԱԷ-ԻՋԵՎԱՆ**, **ԼԵՆԻՆԱԿԱՆ-ԱՐՔԻԿ** (տուֆարտահանման համար) և **ՈՒՅԻՅԱՅ-ՊԱՓԱՆ** (Վափանի պղնձահանքերն այդպիսով կկապվեն Բագու-Ջուլֆա չերկաթուղագծի հետ): Խճուղիները (շոստե) ավելանալու չեն 240 կիլոմետրով, սալի ճանապարհները՝ մոտ 1500 կիլոմետրով. բացի այդ մոտ 200 կիլոմետր առաջին կարգի, կատարելագործված ճանապարհներ են շինվելու: Խճուղիներով միանալու չեն Ջանգեզուրն ու Մեղրին, Դարալագյազն ու Բայազետը, Սևանի ափին գտնվող շրջանները: Սևանա լճի վրա ստեղծվելու չէ նավատորմի և կանոնավոր յերթևեկութուն է հաստատվելու ափի գլուղերի մեջ. այդպիսով Սևանի հարուստ շրջանը հնարավորութուն կստանա զարգացնելու իր ապրանքաշրջանառութունը:

Ավստրոբիլայի տրանսպորտը 1932—33 թվին պիտի փոխադրի ավելի քան կես միլիոն մարդ և

143 հազար տոնն ապրանք (անցյալ տարի հազար տոննից ել պակաս է փոխադրել):

ԳՅՈՒՎԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅՆԱՐ

Մեր գյուղատնտեսությունը զարգանալու յե յերկու հիմնական ուղղությունք՝ 1) ի հաշիվ տեխնիկական կուլտուրաների զարգացման (բամբակ, միրգ, ճակնդեղ), 2) անասնապահության զարգացման ուղիով: Հացաբույսերի մշակույթը նույնպես առաջ է գնալու, բայց ավելի թույլ թափով:

Հացահատիկների ցանքսի տարածությունը աճելու չէ 17 տոկ., իսկ բերքը՝ 53 տոկոսով:

Տեխնիկական կուլտուրաների ցանքսի տարածությունն աճելու չէ 222 տոկ., իսկ բերքը՝ 330 տոկոսով:

Վորից բամբակի ցանքսի տարածությունն աճելու չէ 194 տոկ., իսկ բերքը՝ 312 տոկոսով:

Յերկրագործության ընդհանուր արտադրանքը հինգ տարվա ընթացքում կրկնապատկելու չէ: Անասնապահության արտադրանքն աճելու չէ 80 տոկոսով:

Ցանքսերի տարածությունը ավելանալու չէ շնորհիվ այն խոշոր վոչոզման աշխատանքների, վոր տանում է աչսոր խորհրդային իշխանությունը: Այդ աշխատանքների վրա ծախսվելու չէ ավելի քան 28 միլիոն ուրբի. կառուցվում է Սարդարաբադի փոքր ջրանցքը, Ղարասուի, Արազդայանի, Կարճեանի, Չանգիբասարի ջրանցքները, ուժեղացվում է Այլը լճի կայանը, վոռոգվում է դոնեի մեծ մասը:

Ուժգին թափով առաջ է գնում գյուղի սոցիա-

լիսաձև գերակառուցումը. կոլխոզների մեջ կալին 1927—28 թվին ութ հարյուր տնտեսություն, հնգամյակի վերջում լինելու չեն չոթ հազար հինգ հարյուր, կազմելով բոլոր գյուղացիական տնտեսությունների 17 տոկոսը: Նրանց ցանքսերի տարածությունը հասնելու չէ 75 հազար հեկտարի:

Գյուղատնտեսական կոոպերացիայի անդամների թիվը հասնելու չէ 77 հազարից 224 հազարի, այսինքն ընդգրկելու չէ գյուղացիության ճնշող մեծամասնությունը (90 տոկոս): Սպառողական կոոպերացիան իր շտրքերն է ընդունելու գյուղացիության 75 տոկոսը:

Պարզ է, վոր սրահեռմիասին մեծ չափով ավելանալու չէ տրակտորների, սերմադրոնների և այլ գյուղատնտեսական մեքենաների թիվը:

ԿԱՐԵՏՈՐԱԿԱՆ ՑԵՎ ԿԵՆՏՐԱԼՑԻՆ ԽԵՒԻՐՆԵՐԸ ՀՆԳԱՄՅՆԱՐ

Հնգամյակը նախատեսում է մեծ նվաճումներ վոչ միայն տնտեսական ասպարիղում, այլև կուլտուրական շինարարության մեջ: Այսպես, որինակ, վորոշված է աճեցրագիտությունը Հայաստանում հիմնականում վերացնել հնգամյակի ընթացքում. ալդ նպատակով սոցիալիստական մրցման պայմանադիր է կնքված Լուսնողկոմատի, կոոպերացիայի, տնդրադիտություն վերացման ընկերություն և արհեստակցական միությունների միջև:

Դպրոցներում սովորող աշակերտության թիվը հասնելու չէ 116.000-ից 201.000-ի, վորից միջնակարգ դպրոցներում սովորելու չեն 23.000 հոգի, բարձր-միջնակարգ—4000 և բարձրագույն, այսինքն համալսարաններում՝ 1700: Բացի ալդ, հասակավոր-

ների սուսցման զպրօցներում լինելու յեն 61.000 հոգի:

Արդյունաբերության աճման հետ միասին աճում է և բանվոր զասակարգը:

Վարձու աշխատանքով զբաղվողների թիվը կըհասնի մոտ 100.000-ի, վորի կեսը բանվորներ կլինեն:

Գործազուրկների թիվն իջեալու յե 12.000-ից 7.000-ի:

Միջին ունալ աշխատավարձն ավելանալու յե մոտ 70 տոկոսով:

Սոցիալական ասպահովագրության վրա ծախսվող գումարներն ավելանալու յեն 107,6 տոկոսով հասնելով տարեկան 6.200.000 ուրլու:

Արդյունաբերության մի շարք ճյուղերում ձեւացած բանվորները սխալ ապահովագրական նպաստ ստանան:

Ամբողջ արդյունաբերությունը անցնելու յե 7-ժամյա բանվորական որվա:

Բնակարանային շինարարության վրա ծախսվելու յե 38.000.000, այդ գումարի մեծ մասը հատկացվելու յե, իհարկե, բանվորական բնակարաններին: Բայց այդ ևս չի բավարարի յեղած ծով կարիքը, և մենք պետք է միջոցներ փնտռենք ավելի ընդարձակելու բնակարանային շինարարության թափը:

Ընդհանուր առմամբ մեր ամբողջ ժողովրդական տնտեսության վրա ծախսվելու յե մոտ 300 միլիոն, վորից 100 միլ. արդյունաբերության վրա, 38 միլիոն բնակշինարարության, 30.000.000 տրանսպորտի, ավելի քան 80.000 000 գյուղատնտեսության և այլն: Խորհրդային Հայաստանը բոլորովին կերպարա-

25962.60

նափոխվելու յե հինգ տարվա ընթացքում: Ելեկտրական եներգիտյի ուժեղ ցանցը կպատի յերկիրը, ելեկտրական լուսը կմտնի մեր գյուղը: Ավտոմոբիլային հաղորդակցությունը կկապի յերկրի բոլոր մասերն իրար հետ ավելի սերտ կերպով, քան նույնիսկ յերկաթուղին է կապում: Կուժեղանան պրոլետարական կենտրոնները, կստեղծվեն նորերը: Մեր քաղաքների արտաքին տեսքն էլ կփոխվի՝ մոտ հարյուր վաքսուճ միլիոնի նոր շենքեր ու կառուցույթներ են լինելու: Հին ասիական, պարսկական թաղամասերը, ցեխով ու կրով շինված խարխուլ շենքերը կանհետանան, նրանց փոխարեն կբարձրանան յերկաթ-բետոնի, տուֆի ու պեմզայի հոյակապ կառուցվածքները: Արևի չորացրած անապատներով կըհոսեն Արաքսի, Սևանի, Ալազյազի ջրերը, վերածելով նրանց հարուստ, ծաղկած դաշտերի: Մեր գյուղատնտեսության ու արդյունաբերության տարեկան արտադրանքը կհասնի 313.000.000-ի, այսինքն ազգաբնակչության ամեն մի շնչին 275 ուրլի (Իսկ սնցյալ տարի յեղել է ընդամենը 128 ուրլի):

ՎՈՐՏԵՂԵՑ ԵՆ ԳԱԼԻՍ ԱՆՀՐԵՑԵՑՑ ՄԵՋՈՑՆԵՐԸ

Վճրտեղից են գալու այն հսկա միջոցները, վոր անհրաժեշտ են այդ մեծ աշխատանքները կատարելու համար:

Մի մասը (և ամենախոշոր մասը, իհարկե) գալու յե Խորհրդային Միությունից: Խորհրդային իշխանությունն առանձին ուշադրություն է դարձնում Հայաստանի նման ծայրամասերի վրա, վորոնք ցարական տիրապետության ժամանակ շատ յետ ելին ֆև-



ցել տնտեսապէս: Նրանց զարգացման համար արամադրվում են բոլոր հարկ յեղած միջոցները:

Մլուս, ճիշտ ե, փոքր մասը պիտի լրացվի տեղական միջոցներէից, ուրիշ խոսքով՝ հենց մեր արդոււնաբերութեան սեփական ոգուտներէից: Մեր հընգամչակը նախատեսում ե արտադրողականութեանը բարձրացում ավելի քան 100 տոկոսով և ինքնարժեքի իջեցում 35 տոկոսով: Միայն այն դեպքում, յեթե մենք կարողանանք իրականացնել այս, մենք կունենանք հնարավորութիւն կատարելու այն հիմնական ներդրումները, վորոնք նախատեսված են հնգամյա պլանով՝ կառուցել նոր գործարաններ, ելեկտրոկայաններ և այլն: Ինքնարժեքի իջեցման ամեն մի օտկոսը տալիս ե միութենական արդոււնաբերութեանը մոտ 120.000 000 ռուբլի տնտեսում: Մեղանում ինքնարժեքի մի տոկոսը կազմում ե այս տարի մոտ կես միլիոն ռուբլի, ուրեմն յեթե մենք իջեցնենք ինքնարժեքը միջին հաշվով 8 տոկոսով (կան ձեռնարկներ, վորտեղ ալգպիսի խոշոր իջեցում անհնար ե մի տարվա ընթացքում, մյուս կողմից կան այնպիսիները, վորտեղ կարելի չե ինքնարժեքն իջեցնել 20—30—40 տոկոսով), դա կտա մեզ մոտ 4 միլիոն ռուբլի տնտեսում. կարելի կլինի մի փոքր իջեցնել ապրանքների գները և բացի այդ՝ շինել մի չերկու գործարան:

Իսկ խորհրդային Միութիւնը վորտեղից ե տալու մեզ անհրաժեշտ գումարները: Հիմնականում նույն աղբյուրից, այսինքն արտադրողականութեան բարձրացման հետևանքով ստացված տնտեսումից:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր հնգամյա

պլանի իրագործումը կախված ե վերջին հաշվով աշխատանքի արտադրողականութիւնից:

Ահա թե ինչու ամեն մի բանվոր պարզ հաշիվ պիտի տա իրեն հնգամյա պլանի և այն պարտականութիւնների մասին, վոր իր գործարանը վերցնում ե իր վրա այդ հնգամյա պլանով:

Նա պիտի անխնա կռիվ մղի աշխատանքի գիտնականութեան խաթողների, ծուլութեան, թափթփածութեան, անտնտեսավարութեան մեջ մեղավորներին դեմ, վորովհետե սրանք բոլորը խանգարում են սոցիալիստական շինարարութեանը, քայքայում են հնգամյա պլանը: Նա պետք ե ուշադրութեամբ հսկի հնգամյա պլանի կատարման վրա, թույլ չտա, վորպեսզի ալելորդ, չնախատեսված ծախսեր արվեն, վորովհետե լեթե մի տեղ դուք հազար ռուբլի սվել եք ծախսում, ապա մի ուրիշ օեղ հազար ռուբլի կպակասի, և աշխատանքները կկաղան: Պետք ե հիշել միշտ, վոր պլանային օեհետութեան մեջ ամեն մի կոպեկը հաշիվի յե առնված և իրեն նշանակութիւն ու տեղն ունի:

Ի՞նչպէս Իրագործենք Հնգամյա Պլանը

Հնգամյա պլանը մեր ամենամեծ գործն ե: Մեր բոլոր աշխատանքները պիտի յենթարկվեն այդ պլանին իրագործելու նպատակին: Բանվոր զասակարգն իր բոլոր ապպարատները, իր բոլոր մարդկային կազմերը փորձելու չե այդ հնգամյա պլանով, ով լավ ե կատարում այն անելիքները, վոր նրա վրա դրել ե հնգամյա պլանը՝ նա որիցակեի աշխատող ե և իր զասակարգի հարազատ զավակը. իսկ ով այս կամ այն

ցել տնտեսապես: Նրանց զարգացման համար տրամադրվում են բոլոր հարկ յեղած միջոցները:

Մյուս, ճիշտ ե, փոքր մասը պիտի լրացվի տեղական միջոցներից, ուրիշ խոսքով՝ հենց մեր արդյունաբերութեան սեփական ոգուտներից: Մեր հընգամակը նախատեսում ե արտադրողականութեանը բարձրացում ավելի քան 100 տոկոսով և ինքնարժեքի իջեցում 35 տոկոսով: Միայն այն դեպքում, յեթե մենք կարողանանք իրականացնել այս, մենք կունենանք հնարավորութիւն կատարելու այն հիմնական ներդրումները, վորոնք նախատեսված են հնգամյա պլանով՝ կառուցել նոր գործարաններ, ելեկտրոկայաններ և այլն: Ինքնարժեքի իջեցման ամեն մի օկոսք տալիս ե միութենական արդյունաբերութեանը մոտ 120.000 000 ուրբլի տնտեսում: Մեզանում ինքնարժեքի մի տոկոսը կազմում ե այս տարի մոտ կես միլիոն ուրբլի, ուրեմն յեթե մենք իջեցնենք ինքնարժեքը միջին հաշվով 8 տոկոսով (կան ձեռնարկներ, վորտեղ այդպիսի խոշոր իջեցում անհնար ե մի տարվա ընթացքում, մյուս կողմից կան այնպիսիները, վորտեղ կարելի չե ինքնարժեքն իջեցնել 20—30—40 տոկոսով), դա կտա մեզ մոտ 4 միլիոն ուրբլի տնտեսում. կարելի կլինի մի փոքր իջեցնել ապրանքների գները և բացի այդ՝ շինել մի յերկու գործարան:

Իսկ Խորհրդային Միութիւնը վճարողից ե տալու մեզ անհրաժեշտ գումարները: Հիմնականում մուչն աղբյուրից, այսինքն արտադրողականութեան բարձրացման հետևանքով ստացված տնտեսումից:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր հնգամյա

պլանի իրագործումը կախված ե վերջին հաշվով աշխատանքի արտադրողականութիւնից:

Ահա թե ինչու ամեն մի բանվոր պարզ հաշիվ պիտի տա իրեն հնգամյա պլանի և այն պարտականութիւնների մասին, վոր իր գործարանը վերցնում ե իր վրա այդ հնգամյա պլանով:

Նա պիտի անխնա կռիվ մղի աշխատանքի գիտելիքով խախտողների, ծուլութեան, թափթփվածութեան, անտնտեսավարութեան մեջ մեղավորներին դեմ, վորովհետև սրանք բոլորը խանգարում են սոցիալիստական շինարարութեանը, քայքայում են հնգամյա պլանը: Նա պետք ե ուշադրութեամբ հսկի հնգամյա պլանի կատարման վրա, թույլ չտա, վորպեսզի աշխատողները, չնախատեսված ծախսեր արվեն, վորովհետև յեթե մի տեղ դուք հազար ուրբլի ավել եք ծախսում, ապա մի ուրիշ օեղ հազար ուրբլի կպակասի, և աշխատանքները կկաղան: Պետք ե հիշել միշտ, վոր պլանային օեղութեան մեջ ամեն մի կոպեկը հաշիվի յե առեկած և իրեն նշանակութիւն ու տեղ ունի:

ԻՆՉՊԵՍ ԻՐԱԳՈՐԾՆԵՐ ՀՆԳԱՄԵՆ ՊԼԱՆԸ

Հնգամյա պլանը մեր ամենամեծ գործն ե: Մեր բոլոր աշխատանքները պիտի յեքարկվեն այդ պլանին իրագործելու նպատակին: Բանվոր դասակարգն իր բոլոր ապագարատները, իր բոլոր մարդկային կազմերը փորձելու չե այդ հնգամյա պլանով. ով լավ ե կատարում այն անելիքները, վոր նրա վրա դրել ե հնգամյա պլանը՝ նա որիցակելի աշխատող ե և իր դասակարգի հարազատ զավակը. իսկ ով այս կամ այն

կերպ խանգարում ե հնգամյակի իրագործմանը, նա կամս թե ակամա վճատակար աշխատանք ե տանում, թուլացնում ե մեր ինդուստրիացման թափն ու սոցիալիզմի շինարարութեան գործը:

Հնգամյա պլանը պահանջում ե մեզանից լարված աշխատանք: Կան մարդիկ, վորոնք ասում են. «Ին ինչ կարիք կա այդքան շտապելու. իզուր եք այդքան լարված թափ վերցնում. չե՞ վոր դժվար ե. յիկեք այս հնգամյակում նախատեսված աշխատանքները կատարենք տասը տարում»: Այդպիսի մարդիկ մոռանում են, վոր մենք ապրում ենք ու աշխատում կապիտալիստական շրջապատում: Յեթե այդ շրջապատը չլիներ, կարելի չեր ավելի դանդաղ թափ վերցընել: Բայց այդ ԵՐՉԱՊԱՅԵ ԿԱ: Յեվ բուրժուազիան պատրաստվում ե դենքով ճնշելու խորհրդային իշխանութունը: Մեր յերկրում ել կուլակը, նեպմանը և ֆուսարար մասնագետներն ամեն կերպ աշխատում են կասեցնել մեր շինարարութունը: Քանի դեռ մենք տեխնիկապես ավելի հետամնաց ենք, քան կապիտալիստական յերկրները, մենք պիտի աշխատենք առաջ գնալ շատ լարված թափով՝ կապիտալիստական յերկրներին համեմատելու և նրանցից անցնելու համար: Այս հնգամյակում մենք այդ գործի մի խոշոր մասը պիտի կատարենք:

Կամ մենք լարված աշխատանքով կամրացնենք մեր խորհրդային Միութունը և 6—10 տարի հետո կկանգնենք սոցիալիզմի դռանը, կամ թե չե գերի պիտի գնանք միջազգային կապիտալիզմին—այս յերկու յելքից մենք միայն առաջինը կարող ենք ընտրել:

Վերջին տարիների փորձն ասում ե, վոր մենք մեր պլանների մեջ միշտ սխալվել ենք. գործնականում մենք ավելի խոշոր աշխատանք ենք կատարել, քան նախատեսել ենք: Յեվ այսոր արդեն պարզվում ե, վոր հնգամյա պլանը մի շարք մասերում պիտի վերանայվի, նախատեսված թափը պիտի ուժեղացվի:

Բանվոր դասակարգը նորանոր ձևեր ե գտնում իր արդյունաբերութունն ու ամբողջ տնտեսութունը զարգացնելու համար: Հնգամյա պլանն արդեն կազմված եր, յերբ սկսվեց սոցիալիստական մրցումը, և հարց բարձրացվեց գործարաններն անընդհատ աշխատանքի անցկացնելու մասին: Այս ամենն արդեն ցույց ե տալիս, վոր մենք կարող ենք վոչ միայն իրագործել հնգամյա պլանը, այլև ավելին կատարել:

Հարկավոր ե միայն հավաքել մեր բոլոր ուժերը, կենտրոնացնել մեր ամբողջ ուշադրութունը ալդ մեծ ու դժվար գործի շուրջը:

Յերբեք մարդկութեան պատմութեան մեջ աչնպիսի հսկայական շինարարութուն չի կատարվել, ինչպիսին նախատեսում ե հնգամյա պլանը: Բուրժուական աշխարհն ատելութեամբ ու սարսափով ե դիտում այդ շինարարութունը:

Յեվ դա հասկանալի յե. հնգամյա պլանը սոցիալիզմի հիմքերն ե դնում, հիմնահատակ քանդելով կապիտալիզմի հիմքերը մեր յերկրում:

Մեր բանվորութունն ու աշխատավոր պուղացիութունը պիտի լարեն իրենց ուշքն ու միտքը հնգամյա պլանի իրագործման վրա և ապահովեն այդպիսով սոցիալիզմի վերջնական հաղթանակը:

Դրա համար հարկավոր ե որ որի վրա ուշա-

դրությամբ քննել այդ պլանի կատարումը ամեն մի գործարանում ու ցեխում, ամեն մի շրջանում ու կոլ-խոզում շարունակ կատարել ստուգում, ուղղել կատարված սխալներն ինքնաքննադատության միջոցով և սոցիալիստական մեցման նշանաբանի տակ՝ բարձրացնելով աշխատանքի արտադրողականութունը, ջարդել ու մաքրել այն բոլոր դժվարությունները, վորոնք կանգնած են մեր պլանների առաջ:

Մ. Առանց բարձր աշխատանքի արտադրողականության, ասել է ընկեր Լեհիցը, մենք սոցիալիզմ չենք կառուցի:



« Ազգային գրադարան



NL0207520

32.229

239

Գ Ի Ն Ն Ե

5

Կ Ո Պ Ե Կ

